

**Հասմիկ Ամիրջանյան**  
**ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԴՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ**  
**ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XVIII դ.ՎԵՐՋ)**

Բանալի բառեր-ազատագրվել, քաղաքականություն, արքեպիսկոպոս, նախագիծ, դաշնագիր, Գ. Պոտյոմկին, պետականություն, Անդրկովկաս, զեկուցագիր, ռուսական արշավանք:

XVIII դարից սկսած Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության ուղղություններն ու ընթացքը համընկնում էին հայ ազգային-ազատագրական շարժման միտումներին, և հայ ազգային գործիչներն իրական հիմքեր էին տեսնում կայսրության օժանդակությամբ օտարի լծից ազատագրվելու: Անդրկովկասի քրիստոնյա բնակչությունը պետք է դառնար այն հենարանը, ինչի օգնությամբ Ռուսաստանը կամրապնդեր իր քաղաքական ու տնտեսական գերակայությունը երկրամասում:

Դեռևս 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի սկզբից ռուսական կառավարությունը քայլեր է ձեռնարկում Անդրկովկասի քրիստոնյա ժողովուրդների շրջանում ազատագրական շարժում հրահրելու համար՝ փորձելով շահել նրանց համակրանքն ու ստանալ աջակցությունը: Եկատերինա II-ի (1762-1796) կառավարությունն առաջ էր քաշում դեպի Անդրկովկաս արշավանք ձեռնարկելու և իր դիրքերն այնտեղ ամրապնդելու ծրագիր: Իր քաղաքականության իրագործման համար ցարիզմը հենվում էր տեղի ազդեցիկ ու հեղինակավոր ներկայացուցիչների վրա, որոնք կնպաստեին ռուսական ազդեցության տարածմանը երկրամասում, միջնորդ կհանդիսանային արքունիքի և անդրկովկասյան ժողովուրդների միջև: Հայերի կողմից որպես պաշտոնական ներկայացուցիչ հանդես եկավ Ռուսաստանի հայոց թեմի հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը, որին ցարական արքունիքում բարձր դիրք զբաղեցնող Հովհաննես Լազարյանը դեռևս 1773 թ. Աստրախանից կանչել էր Պետերբուրգ և ներկայացրել արքունիքին<sup>1</sup>: Բացի այդ նա, լինելով մտերիմ վրաց Հերակլ II (1744-1798) և այնուհետև Գեորգի (1798-1801) թագավորներին՝ դարձավ վրաց արքաների ներկայացուցիչն ու բարեխոսը ռուսական արքունիքում:

Հովսեփ Արղությանը լինելով XVIII դարի հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկը՝ հայության փրկության ուղին տեսնում էր ռուսական զենքի ուժով Հայաստանն ազատագրելու մեջ: Ռուսական կառավարությունը նկատում է, որ հանձին հոգևոր հոր նա ունի վստահելի միջնորդ իր քաղաքական նպատակների իրագործման ճանապարհին: Արքեպիսկոպոսի սերն ու վստահությունը ռուսների

<sup>1</sup> Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1973, էջ 331:

նկատմամբ այնքան մեծ էր, որ իր հայրենիքի վերականգնման հարցը կայսրուհու ողորմածությամբ գրեթե իրականացած էր համարում<sup>1</sup>:

Արդությանի քաղաքական գործունեությունն սկսվեց 1779 թ., երբ նա իր թեմական նստավայր Աստրախանից մեկնեց Պետերբուրգ՝ Յ. Լազարյանի կառուցած եկեղեցին օծելու: Այդ պահից նրա գործունեության հիմնական ուղղությունը դառնում է Ռուսաստանի հետ հարաբերությունները: Պետերբուրգում նա և Յ. Լազարյանը մշակում են Հայաստանի անկախության վերականգնման ծրագիր, Իսկ 1780 թ. հունվարից ռուս քաղաքական-ռազմական գործիչների հետ այդ հարցի շուրջ մասնակցում են խորհրդակցությունների<sup>2</sup>: Հանդիպումներ են ունենում գեներալ Ի. Գորիչի, նշանավոր զորավար Ալ. Սուվորովի, իշխան Գ. Պոտյոմկինի հետ, որոնք հայտնում են, որ ռուսները մտադիր են արշավանք սկսել՝ գրավելու մերձկասպյան շրջանները և վերականգնելու հայկական պետականությունը: Այդ առիթով հայերից հարցում է կատարվում Պարսկաստանի ու Հայաստանի ռազմական, տնտեսական իրավիճակների մասին: Ամբողջ խոսակցության ընթացքը Յ. Արդությանը մեջբերել է իր օրագրում. «Իւան Պետրովիչ Գորիչն եկն առ մեզ և յայտնեաց զգնալն իւրեանց ի վերայ պարսից առ ի տիրել զծովեզերեայ տեղիսն, հարցումն արար վասն պարսից երկրացն...: ...գեներալ պօռօճիկ Ալէքսանդր Վասիլիչ Սուվօրովն եկն առ մեզ ի տեսութիւն. ...և ի վերայ երկրացն մերոց բազում հարցմունս արար մինչև ցերկու ժամս: ...վարուց նաև որպիսութեանց մելիքացն մերոց, որք ի յԱրցախ յաշխարհին են...»<sup>3</sup>: Յ. Արդությանն ու Յ. Լազարյանը մանրամասն ներկայացնում են իրավիճակը Կովկասում:

Հանդիպումները մեծ հույսեր են պարգևում Արդությանին: Նույն տարվա փետրվարին նա մայրաքաղաքի Նևսկու պողոտայի Ս. Եկատերինա եկեղեցու օծման ժամանակ ռուսական բարձրաստիճան ավագանու ներկայությամբ քարոզ է կարդում, որում հիշեցնում է դեռևս Պետրոս I-ի օրոք հայերին օգնելու ռուսների մտադրությունը, ինչը չիրականացավ: Նա հույս է հայտնում, որ Պետրոս I-ի արժանավոր հետնորդ Եկատերինա II-ը կիրականացնի հայության վաղեմի երազանքը և կազատագրի հայ ժողովրդին<sup>4</sup>:

Թվում էր, ամեն ինչ տանում էր դեպի ռուսական սպասված արշավանքի իրականացումը: Նախատեսվում էր 1782 թ. հարավում ակտիվ ռազմական գործողություններ սկսել: Հյուսիսային Կովկասի բանակի գլխավոր հրամանատար նշանակվեց Գ. Պոտյոմկինի ազգական գեն. Պավել Պոտյոմկինը: Վերջինս 1782 թ. դեկտեմբերի 21-ին Արդությանին գրում է տասներեք կետից բաղկացած իր հայտնի

<sup>1</sup> Տե՛ս Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, 1987, Երևան, էջ 478:

<sup>2</sup> Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, էջ 333:

<sup>3</sup> Տե՛ս Գիւտ քահանայ Աղանեանց, Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 24-26:

<sup>4</sup> Տե՛ս Ա. Բ. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-ых годах XVIII столетия, Ереван, 1990, էջ 21-22.

նամակը<sup>1</sup>, որով գեներալը փորձում էր տեղեկանալ, թե արդյո՞ք հայերը ի վիճակի կլինեն ռուսական զորքը ապահովել փոխադրամիջոցներով, պարենով, ինչպես նաև ոտքի կանգնել ու տապալել ճնշող լուծը: Հետաքրքրվում էր Անդրկովկասի, այդ թվում Արցախի քաղաքական և տնտեսական իրավիճակով, հարցում անում տեղի ժողովուրդների բարքերի, սովորույթների վերաբերյալ, տեղեկանում ճանապարհների անցանելիությունից և այլն:

Պ. Պոտյոմկինի հարցադրումները պատահական չէին, քանի որ մտավախություն կար այստեղ դժվարությունների հանդիպել, մանավանդ որ նրանք իրենց հույսն ամբողջությամբ դրել էին տեղի բնակչության և ռուսական կողմնորոշման գործիչների օգնության վրա: Արդությանն ամենայն բարեխղճությամբ, կետ առ կետ գրավոր պատասխանում է գեներալի հարցերին, որի հիմնական առանցքն այն էր, որ հայերը պատրաստ են տապալել օտարի լուծը, եթե վստահ լինեն, որ դրսից օգնություն կստանան, հավաստիացնում է, որ ռուսական զորքը պարենի և փոխադրամիջոցների պակաս չի ունենա<sup>2</sup>:

Ստանալով իր հարցերի պատասխանները՝ իշխան Պոտյոմկինը Արդությանին հանձնարարեց հուսադրել Արցախի մելիքներին: Արքեպիսկոպոսն այդ մասին գրություններ ուղարկեց Արցախ<sup>3</sup>: Մելիքները Գանձասարի վանքում ժողով գումարեցին, հանդիսավոր կերպով հայտնեցին իրենց հպատակությունը Ռուսաստանին և իրենց ներկայացուցիչ ընտրեցին Հովսեփ արքեպիսկոպոս Արդությանին, որի միջոցով էին ուղարկվում բոլոր դիմումները<sup>4</sup>: Վերջինիս մասնակցությամբ ռուսահայ շրջաններում մշակվում է վերականգնվելիք հայկական պետության վերաբերյալ դաշնագրի նախագիծ՝ Հայաստանի ապագա քաղաքական կառուցվածքի, Ռուսական կայսրության հետ փոխհարաբերությունների և այլնի մասին<sup>5</sup>: Նախագիծը բխում էր ժամանակի իրական հնարավորություններից և հաշվի էր առնված ռուսական տերության արտաքին և ներքին քաղաքական նպատակներն ու շահերը: Այն կազմելու համար կարևոր դեր ունեցավ 1783 թ. հուլիսի 24-ին կնքված Գեորգիևյան ռուս-վրացական դաշնագիրը<sup>6</sup>, որի նախապատրաստման գործին իր դերն է ունեցել Հովսեփ Արդությանը: Նա Հայաստանի ազատագրության հարցը խստորեն կապում էր Վրաստանի ազատագրության հետ.

<sup>1</sup> Նամակի ամբողջական տեքստը տես՝ Армяно-русские отношения в XVIII веке («БіблѳС»нԷ՝ Армяно-русские отношения...), сборник документов под ред. акад. М. Нерсисяна, т. IV, Ереван, 1990, док. 177, с. 196.

<sup>2</sup> Տե՛ս Армяно-русские отношения..., док. 125, с. 203-207, А. Р. Иоаннисян, նշվ աշխ., էջ 36-41:

<sup>3</sup> Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, էջ 343:

<sup>4</sup> Տե՛ս Собрание актовъ , относящихся к обозрению истории армянского народа, ч. I, М., 1838, էջ 59-60, Լեո, Յովսեփի կաթողիկոս Արդութեան, Թիֆլիս, 1902, էջ 122:

<sup>5</sup> Տե՛ս Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 2010, էջ 168-169:

<sup>6</sup> Դաշնագրով Քարթլի-Կախեթի միացյալ թագավորությունը մտնում էր Ռուսաստանի հովանավորության տակ, իսկ Ռուսաստանը պարտավորվում էր զորք մտցնել Վրաստան՝ այն պաշտպանելու նպատակով:

վերջինիս՝ Ռուսաստանի հովանավորության տակ անցնելը ևս մեկ քայլ կլիներ հայրենիքն օտար լծից ազատելու ճանապարհին: Ռուսական կառավարությունն այս անգամ ևս ճիշտ գնահատեց հայ արքեպիսկոպոսի քաղաքական դիրքորոշումը՝ նրան մասնակից դարձնելով «Յերակլին համոզելու» առաքելությանը<sup>1</sup>, քանի որ Ղրիմը Ռուսաստանին միացնելու մանիֆեստի հրապարակումից (1783 ապրիլի 8) և Թուրքիայի կողմից այն ճանաչելուց հետո իրավիճակը լարված էր, և մտավախություն կար, որ Յերակլը կարող է թուրքերի կողմից ներքաշվել պատերազմի մեջ: Վրաց արքային ռուսների կողմը տրամադրելու գործում իր նպաստի մասին Արղությանը 1783 թ. հոկտեմբերի 1-ին Յ. Լազարյանին պատմում է. «Յայսմ ամի ես մեծապես եմ աշխատեալ վասն թագաւորութեանս ի բանս վրացոց և մեր երկրի, համարեա թէ ամենայն ինչ ըստ գրելոցն իմոց եղև»<sup>2</sup>: Ավելի ուշ՝ 1796 թ. գեներալ Պ. Ջուբովին գրում է, որ Պոտյոմկինի հրամանով բոլոր ջանքերը գործադրել է վրաց արքային համոզելու, որ ընդունի Ռուսաստանի հովանավորությունը<sup>3</sup>:

Նախագիծը ուշադրության չարժանացավ, ինչի բացատրությունը տվել է ինքը՝ Արղությանը 1789 թ. Շ. Շահամիրյանին գրած նամակում, նշելով, որ ռուսական կառավարությունը մերժում է որևէ դաշնագիր կնքելու առաջարկ. «...այժմ պատասխանեաց թէ թագաւորք ընդ թագաւորաց կարեն դնել զդաշինս, ազգի ձերում ո՞վ է թագաւորն որ համարձակիցի զդաշինս խնդրել, իսկ հոգևոր պետն ձեր զինքն հեռացուցանէ այսմանէ խորհուրդոյ, և այսպես մնաց բանն անկատար»<sup>4</sup>: Չնայած դրան՝ այն հետաքրքիր է որպես ժամանակաշրջանի ռուսահայ գործիչների քաղաքական մտքի օրինակ: Ի վերջո, Յ. Արղությանի ծրագրի առաջնակետը հայկական պետականության վերականգնման խնդիրն էր, իսկ այդ անկախությունն ամբողջովին խարսխված էր լինելու Ռուսական պետության հովանավորության ու գերակայության վրա:

Ջանքերի անհետևանք մնալը չի հուսահատեցնում Յովսեփին: Նա նամակներով Պ. Պոտյոմկինին խնդրում է արագացնել արշավանքը, հավաստիացնում, որ Արցախում ամեն ինչ պատրաստ է ռուսական զորքը ընդունելու համար<sup>5</sup>: 1783 թ. հուլիս-օգոստոսին գրած նամակում մեկիքներին խորհուրդ է տալիս գրավոր խնդրել Գ. Պոտյոմկինի պաշտպանությունն ու հովանավորությունը, իսկ Գանձասարի կաթողիկոս Յովհաննեսին առաջարկում է մթերքը հնարավորինս անվճար տրամադրել ռուսական զորքին, ինչով կարժանանան զորահրամանատարների բարեհաճությանը<sup>6</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Վ. Ա. Մարտիրոսյան, Գեորգիևսկի դաշնագիրը և հայերը, ԼՂԳ, 1978, թիվ 9, էջ 96:

<sup>2</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռագիր 4496, թ. 176:

<sup>3</sup> Տե՛ս Վ. Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 96:

<sup>4</sup> Տե՛ս Լեո, Ղայոց պատմություն, էջ 333-334:

<sup>5</sup> Տե՛ս Լեո, Յովսեփ կաթողիկոս Արղութեան, էջ 137:

<sup>6</sup> Տե՛ս Армяно-русские отношения..., док. 159, с. 254-255, док. 161, с. 255-256

Ռուսական արշավանքը դեպի Չայաստան նախատեսվում էր 1784 թ. ամռանը: Արդությանը նախապատրաստական աշխատանքներ էր տանում, ռուս ռազմական գործիչներին մշտապես տեղեկացնում էր Անդրկովկասի քաղաքական իրադարձությունների ընթացքի վերաբերյալ, իր երախտագիտությունը հայտնում առաջիկա արշավանքների առիթով, անգամ անձնական ծառայություններ մատուցում: Պ. Պոտյոմկինին 1784 թ. մարտին գրված նամակներում տեղեկացնում է, որ խոստացված նժույգներն ուղարկում է. «Ահա ըստ խոստման մերոյ՝ ընդ սարժենդ Միքայելին ուղևորեմ գերկոսին ձիանսն...»<sup>1</sup>, ապա իր գոհունակությունն է հայտնում Յերակլ արքայի հետ բարեկամական հարաբերությունների համար՝ ակնարկելով Գերոգիկյան պայմանագիրը:

Սակայն Ռուսական կայսրության արտաքին քաղաքականությունն այլ ընթացք ստացավ: 1784 թ. Պարսկաստանում գահ բարձրացավ Ալի Մուրադ խանը, որը պատրաստակամություն հայտնեց Ռուսաստանին զիջել մերձկասպյան տարածքներն ու Արևելյան Անդրկովկասը, պայմանով, որ Ռուսաստանն իրեն ճանաչի պարսկական շահ և ռազմական օգնություն ցույց տա ընդդեմ Օսմանյան կայսրության: Ռուսական կառավարությունը փորձեց օգտվել ստեղծված բարենպաստ հնարավորությունից՝ խաղաղ ճանապարհով լուծելու Անդրկովկասի հիմնահարցը, և բանակցություններ սկսեց պարսկական կողմի հետ: Շուշու Իբրահիմ խանը ևս շտապեց հպատակության խոստում տալ: Այդ ամենից անհանգստացած, մելիքները 1784 թ. նորից դիմեցին Արդությանին և խնդրեցին շուտափույթ օգնություն, քանի որ Իբրահիմ խանը հալածանքների էր ենթարկում հայերին: Արդությանն այդ մասին նամակներով հայտնեց Գ. Պոտյոմկինին<sup>2</sup>, ապա գնաց Ղզլար՝ գեներալի հետ անձամբ խոսելու:

Որքան էլ Արդությանը մեծ հույսեր էր կապում ռուսական զենքի հետ, այնուամենայնիվ, չէր կարողանում թաքցնել իր հիասթափությունը, տեսնելով, որ գործնական քայլերն ուշանում են: Նրա հուսահատությունը բխում էր նաև այն մեծ պատասխանատվությունից, որ նա վերցրել էր իր վրա՝ հայ գործիչներին հավաստիացնելով, որ շուտով ռուսների օգնությամբ կազատագրվի Չայաստանը: Արդությանին ուղղված Երևանի ազդեցիկ հայերի բազմաթիվ նամակներից զգացվում է, ինչ մեծ հույսեր են նրանք կապում արքեպիսկոպոսի հետ<sup>3</sup>: 1784-1786 թթ. ընթացքում գրված որոշ նամակներում պարզորոշ զգացվում է Արդությանի կասկածները՝ արդյո՞ք իրենց աղերսները բավարար են, որ ռուսական զորքը հասնի Չայաստան: «Նա իր հուսահատությունը չէր հայտնում երկրում գործողներին, չկամենալով

<sup>1</sup> Տե՛ս Նույն տեղում, ժոկ. 181, ս. 284, ժոկ. 190, ս. 294-295.

<sup>2</sup> Տե՛ս Նույն տեղում, ժոկ. 198, ս. 303, ժոկ. 211, ս. 321

<sup>3</sup> Տե՛ս Նույն տեղում, 177, ս. 278-279, ժոկ. 205, ս. 314, ժոկ. 206, ս. 316-317, ժոկ. 219 ս. 330, Չայոց պատմություն, էջ 160:

հուսահատությունն առաջացնել նրանց մոտ, բայց չէր թաքցնում երկրից հեռու ապրողներից»<sup>1</sup>: 1784 թ. հոկտեմբերի 18-ին Յ. Լազարյանին գրում է. «...Որպես այժմ ինձ երևի մեր բանն թուլացեալ է ի միջի դոցայ, զի... Պաւլ Սարգէիչի մէկ պատասխան չդարձուցանեն որպէս յառաջ: Ուրեմն ողորմելիք են ազգ մեր, և մեք իզուր կորուսաք զկեանս մեր ամս երկուս...»<sup>2</sup>: 1785-1786 թթ. Շ. Շահամիրյանին հղած նամակներում չի թաքցնում, որ իրենք բավականաչափ ուժեղ ու հեղինակավոր չեն ռուս քաղաքական գործիչների վրա ազդելու համար. «...անբախտ ազգի մերոյ բանն մնաց և մնայ տակաւին անկատար»: Գրում է, որ Արցախի մելիքները ևս բազմիցս գրեցին երկու Պոտյոմկիններին, «...սակայն դեռ մինչև ցայսօր ոչինչ կարգադրութիւն ոչ է լեալ, թէպէտ խօսակցութիւն՝ բազում...»<sup>3</sup>:

Արդությանը ստեղծված իրավիճակից դուրս գալու նոր քայլեր էր կատարում, նամակներով ռուսներին ներկայացնում էր հայերի ու վրացիների ծանր վիճակը մահմեդականների լծի ներքո: 1785 թ. ապրիլի 18-ին և հուլիսի 15-ին Աստրախանից Պ. Պոտյոմկինին գրած նամակներում գրում է, որ մելիքները դեռևս լիահույս են, որ ռուսական բանակը կհասնի Արցախ<sup>4</sup>: Հովհաննես կաթողիկոսին գրած նամակում թեև լավատեսորեն է խոսում Արցախի ազատագրության մասին, բայց ինքն էլ զգում է, որ դրական քայլեր չեն ձեռնարկվում<sup>5</sup>: Նրա կասկածներն արդարացան. շուտով սկսվեց ռուս-թուրքական երկրորդ պատերազմը (1787-1791), և օրակարգից հանվեց Հայաստանի հարցը:

Այդուհանդերձ, պատերազմը նոր խթան հանդիսացավ հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների համար: Թուրքիայի նկատմամբ ռուսական զորքերի հաղթանակները նոր հույսեր են առաջացնում հայ գործիչների շրջանում, հատկապես, երբ Պոտյոմկինն առաջարկեց հայերի կողմից լիազոր ներկայացուցիչ ուղարկել իր մոտ<sup>6</sup>: 1787 թ. հունվարի 3-ին Շ. Շահամիրյանին ուղղված նամակում Արդությանը կիսում է իր ոգևորությունը, միաժամանակ նշելով, որ Գ. Պոտյոմկինը գնտվում է Ազովում և պատրաստվում է գնալ Նախիջևան, «...որի գալստեանն միով ժամէ ի ժամ սպասեն»<sup>7</sup>: Նրա ուշադրությունից դուրս չէին մնում նաև Արցախի մելիքները, որոնցից Մելիք-Մեժլումն ու Մելիք-Աբովը՝ հուսահատված, որ դրսից օգնություն կստանան, ռուսական զորքի հետ գնացել էին Թիֆլիս, ուր բնակվում էին աղքատության մեջ: Մելիքների ծանր դրությունը հարկադրում է Արդությանին հերթական անգամ դիմել ռուս

<sup>1</sup> Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, էջ 357:

<sup>2</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռագիր 4496, թթ. 232-233:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, ձեռագիր 2099, թթ. 42-43:

<sup>4</sup> Տե՛ս Армяно-русские отношения..., док. 220, с. 332, док. 224, с. 334.

<sup>5</sup> Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, էջ 356:

<sup>6</sup> Տե՛ս Լեո, Յովսէփ կաթողիկոս Արղութեան, էջ 131:

<sup>7</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռագիր 2699, թ. 130:

քաղաքական ու ռազմական գործիչներին: 1788 թ. ընթացքում Գ. Պոտյոմկինին քանիցս ներկայացնում է Շուշիի խանի հալածանքներից Վրաստան փախած մելիքների թշվառ վիճակը, փորձում է դիմել ռուս գեներալ Ի. Գորիչին, որին նախատեսվում էր ուղարկել Անդրկովկաս՝ ռուսական արշավանքն իրագործելու, իսկ մելիքներին հանձնարում է գեներալ Պ. Տեբելին գրություններով ներկայացնել իրենց վիճակը (վերջինս Պոտյոմկինի փոխարեն նշանակվել էր Յուսիսային Կովկասի ռուսական զորքերի հրամանատար)<sup>1</sup>:

Բայց խնդրագրերն ուշադրության չարժանացան, քանի որ Յուսիսային Կովկասում ռազմական գործողություններ էին սկսվել Թուրքիայի դեմ: 1789 թ. ռուսական զորքերի ընդհանուր հրամանատար Գ. Պոտյոմկինը Արդությանին կանչեց Բեսարաբիա՝ ռուս-թուրքական պատերազմի դաշտ: Նրա ներկայությունը գործող բանակում անհրաժեշտ էր իշխան Պոտյոմկինին, քանի որ Բեսարաբիայի և Մոլդովիայի հայկական գաղութները պետք էր տեղափոխեին Ռուսաստան: Ռուսական զորքի շտաբում գտնվելը Յուսիսային մեծ հնարավորություն էր տալիս անմիջապես շփվել ռուս սպաների հետ, նրանց հետ քննարկել հայ ժողովրդի վերաբերյալ հարցերը: Իր ուրախությունը նա նամակներով կիսում է հայ ծանոթների հետ՝ նկարագրելով Պոտյոմկինի հաղթանակները թուրքերի դեմ<sup>2</sup>: Շուտով, 1790 թ. հունվարի 23-ին, Մոլդովիայի Յասի քաղաքում Գ. Պոտյոմկինին է ներկայացնում գեկուցագիր Յայաստանի և Արցախի մելիքությունների մասին: Սակայն հաջորդ տարի Գ. Պոտյոմկինը վախճանվեց, որի մահը Արդությանի համար մեծ կորուստ էր հայրենիքի փրկության առումով:

Անդրկովկասյան արշավանքները շարունակեց գլխավորել գեներալ Պլատոն Զուբովը: Այժմ էլ Արդությանը նրա հետ սկսեց կապել Յայաստանի և Արցախի ազատագրության հույսերը: 1793 թ. մայիսին Պ. Զուբովին գրած նամակը հիշեցումների շարք է Գ. Պոտյոմկինի հետ ձեռք բերված համաձայնությունների վերաբերյալ: Հիշեցնում է, որ «ամենամարդասեր միապետությունը» նախաձեռնել էր Յայաստանն ու Վրաստանը ազատագրելու սուրբ գործը, իսկ Պոտյոմկինը նաև հրաման ուներ մելիքներին ազատագրել պարսկական լծից: Ներկայացնում է իր ներդրած ջանքերն այդ գործում. «...Այդ մասի գրեցի բոլորին, հատկապես մելիքներից յուրաքանչյուրին, ցույց տալով նրանց այն բոլոր օգուտները, որ նրանք կստանան, գտնվելով բարձրագույն հովանավորության ներքո»<sup>3</sup>: Հետաքրքրական է, որ Յ. Արդությանը հիշյալ նամակներում փորձում է Զուբովի ուշադրությունը հրավիրել այն վտանգավոր իրադրության վրա, որ ստեղծվել էր Անդրկովկասում պարսից նոր տիրակալ Աղա

<sup>1</sup> Ст'я Армяно-русские отношения..., док. 241, с. 373, док. 245, с. 378.

<sup>2</sup> Ст'я Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257<sup>3</sup>, վավ. 184, թթ. 1-6, թղթ. 257<sup>3</sup>, վավ. 185, թթ. 1-4:

<sup>3</sup> Ст'я Армяно-русские отношения..., док. 265, с. 396-398.

Մամադ խանի գահակալմամբ: Վերջինս 1790-ական թթ. կեսերին Վրաստանին պատժելու և Գեորգիայան դաշնագիրը վերացնելու համար արշավանք էր նախատեսել դեպի Վրաստան, ինչը մեծ խուճապ էր առաջացրել բնակչության մեջ: Արդությանը Յուսիսային Կովկասի զորքերի հրամանատար Ի. Գուրովիչին մատնացույց է անում վերահաս վտանգը, խնդրում օգնության հասնել Վրաստանին<sup>1</sup>: Բայց ինչպես ինքն է նշում. «Գուրովիչի պինդ գլուխը չըմբռնեց»<sup>2</sup>:

1795 թ. կեսերին Աղա Մամադ խանի արշավանքից ու Թիֆլիսի ավերումից հետո հուսահատված Յերակլը Պարսկաստանին հպատակություն հայտնելու շեմին էր, բայց այդ մտքից նրան ետ պահեց Յովսեփ Արդությանը<sup>3</sup>: Յերակլին գրած նամակում նա, մի կողմից, ողբում է Վրաստանին հասցված աղետի համար, մյուս կողմից՝ մխիթարում արքային. «Ձաղտալի անցս թագաւորութեան ձերոյ, զաւերումն, կործանումն և զգերութիւն ինոյ հայրենեացն լուեալ, ոչ կամ եթէ ոչ իբրև զմեռեալ, և նստեալ ըստ երեմիայի՝ հող ի գլուխս և արտասուս ի յաչս, լամ զբեկումն հայրենեաց ինոց, և զիմս արտասուս և կսկիծ միաւորիմ ընդ աղիողորմ արտասուս գերելոցն և սպանելոցն, տանջելոցն և հալուածելոցն»: ...«Բայց ոչ յուսահատիմ ես իբրև թէ կորեալ իսպառ պաշտպանութիւն սուրբ Աստուածածնին և քաղաքէն և ի թագաւորութենէն քումմէ..., զի սովորէ Աստուած երբեմն խրատիլ իբրեւ զորդիս, այլ ոչ յաւիտեան մերժել զի հաւատամ, որ շարժէ ի գրութիւն զամենողորմած սիրտ ամենաբարեպաշտ ինքնակալուհոյն և կայսերուհոյն մերոյ...»<sup>4</sup>:

Փաստորեն, Յայաստանի բախտը շաղկապելով հարևան պետության ազատագրության ու անվտանգության հետ՝ հայ արքեպիսկոպոսն անկեղծ ցավ է ապրում Վրաստանին հասցված ծանր հարվածի համար, ամեն ինչ անում է, որ դրանք իրենց ազդեցությունը չթողնեն Վրաստանի և Ռուսաստանի բարիդրացիական հարաբերությունների վրա, քանի որ այդ հարաբերությունները պետք է հող նախապատրաստեին, որ Յայաստանը ևս հասնի Ռուսաստանի հովանավորությանը:

Խանի արշավանքը նսեմացնում էր ռուսական ուժի ազդեցությունն Անդրկովկասում, ուստի ռուսները շտապեցին վերականգնել իրենց հեղինակությունը: Աղա Մամադ խանին պատժելու համար նախատեսվում էր արշավանք ձեռնարկել դեպի Անդրկովկաս: Արդությանը փորձում էր այդ արշավանքին իր նախընտրած ուղղությունը տալ: 1796 թ. հունվարի 4-ին Ջուբովին նամակով հայտնում է իր պատրաստակամությունը՝ օգնելու ռուսներին<sup>5</sup>: Փետրվարի 19-ին Պ. Ջուբովը

<sup>1</sup> Տե՛ս Ս. Бутков, Материалы для новой истории Кавказа, СПб., ч. 2, 1869, էջ 335.

<sup>2</sup> Տե՛ս Լեո, Յովսեփ կաթողիկոս Արդութեան, էջ 152:

<sup>3</sup> Տե՛ս Լեո, Յայոց պատմություն, էջ 391:

<sup>4</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռագիր 2951, թ. 82:

<sup>5</sup> Տե՛ս Армяно-русские отношения..., док. 282, с. 415.

պատասխան նամակում Արղությանին տեղեկացնում է, որ ռուսական արքունիքի կողմից Պարսկաստան է ուղարկվելու զորագունդ՝ իր եղբայր իշխան Վալերիան Ալեքսանդրովիչի հրամանատարությամբ: Խնդրում է գնալ Մոզդոկ, եղբոր մոտ՝ նրան ցուցումներ ու տեղեկություններ տալու Պարսկաստանի ու ամբողջ տարածաշրջանի վերաբերյալ, առհասարակ աջակցել նրան իր խորհուրդներով<sup>1</sup>: Եկատերինա կայսրուհին նկատի ունենալով Արղությանի մատուցած ծառայությունները նախորդ պատերազմների ժամանակ՝ ցանակություն էր հայտնել, որ այս արշավանքին ևս նա մասնակցի: Հանձնարարված էր հայոց արքեպիսկոպոսի գործունեությունն ուղղել հօգուտ Ռուսաստանի: Ծերացած, ուժից ընկած արքեպիսկոպոսը պատրաստ էր ամեն զոհողություններ ու նեղություններ հանձն առնել, միայն թե «ռուսաց սուրը հաջողություն գտներ, այն սուրը, որ պիտի պատերազմեր Անդրկովկասի քրիստոնյաների ազատության համար...»<sup>2</sup>: Ռուսահայերի հոգևոր առաջնորդը եռանդուն գործունեություն է ծավալում, անում հնարավոր ամեն ինչ՝ ապահովելու ռուսական բանակի առաջընթացը՝ անգամ հիվանդ վիճակում և իր անձնական ծախսերով: Հ. Լազարյանին գրում է, որ ինչպես Վ. Ջուբովի եղբայրը, «այնպես էլ նա ինքը սաստիկ ցանկանում են մեր ընկերակցությունը արշավանքին՝ մեր ազգի օգտի և հուսադրության համար: ...Մարմնով մաշված լինելով, ես նիւթապէս էլ քանդուում եմ, որովհետև 5000 ռուբլին բաւական չի լինի ինձ այս ճանապարհորդութեան համար: Բայց ինչ անեն, երբ կոմսը (Ջուբովը) հրամայել է և այնքան խնդրել, որ ես չը կարողացայ հրաժարվել»<sup>3</sup>: Պ. Ջուբովին 1796 թ. գրած նամակներում հայտնում է, որ ինչպես նախկինում օգնել է ռուսներին, այժմ էլ պատրաստ է ուժ հավաքել և մինչև արյան վերջին կաթիլը պայքարել, ինչպես ինքն է մշում, հանուն իր հայրենիքի՝ Ռուսաստանի օգուտի և փառքի<sup>4</sup>:

Պարսկական արշավանքը սկսվեց Ղզլարից, 1796 թ. ապրիլի 18-ին: Մայիսի 10-ին ռուսները հարձակումով գրավեցին Դերբենդը: Առաջին հաղթանակը մեծ ոգևորություն պատճառեց Արղությանին. նա կոչով դիմեց Դերբենդի հայերին՝ հորդորելով օգնել ռուսներին պարենով, փոխադրամիջոցներով, ծանոթացնել տեղանքին: Ղզլարից գաղտնի նամակներ էր գրում Արցախի մելիքներին, Հերակլ II-ին՝ ավետելով ռուսական զորքերի գալուստը, հորդորելով պատրաստվել թե զենքով, թե պաշարներով ռուսներին օգնելու<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Собрание актовъ , относящихся к обозрению истории армянского народа, ч. III, М., 1838, էջ 336-337.

<sup>2</sup> Տե՛ս Րաֆֆի, մշվ. աշխ., էջ 513:

<sup>3</sup> Տե՛ս Լեօ, Յովսէփ կաթողիկոս Արղութեան, էջ 157:

<sup>4</sup> Տե՛ս Армяно-русские отношения..., док. 289, с. 424.

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, док. 300, с. 440.

Մեկ ամիս անց, հոկտեմբերի 26-ին, Գանձակ է ուղարկվում զորաջոկատ՝ գեներալ-մայոր Ա. Ռիմսկի-Կորսակովի հրամանատարությամբ, որը պետք է գրավեր Գանձակը, ապա միանալով ռուսական նոր զորքի հետ, որ հասել էր Թիֆլիս, կատարեր ռուսական կառավարության ծրագրի քրիստոնյաների վերաբերյալ մասը: Ջուբովի առաջարկով Արղությանը միացավ այդ զորաջոկատին: Ռուսահայերի հոգևոր առաջնորդը փայփայում էր այն հույսը, որ այս անգամ իրականանալու են Հայաստանն ազատագրելու իր բաղձանքները: Բայց, ինչպես հայտնի է, ռուսական կառավարության հեռահար նպատակը Անդրկովկասի քրիստոնյաներին պարսկա-թուրքական լծից ազատագրելը չէր: Դերբենդի գրավումից հետո Եկատերինա II-ը հրովարտակով դիմեց Պարսկաստանի ժողովուրդներին, հայտարարելով, որ պատերազմը մղվում է միմիայն Աղա Մամադ խանի դեմ, և ոչ ոք չպետք է տուժի ռուսական արշավանքից, այդ թվում մահմեդական վերնախավը: Ջուբովը հրահանգ ուներ տեղի մահմեդականներին վերաբերվել զգուշությամբ, նրանց չտրամադրել ռուսների դեմ: Մյուս կողմից՝ արշավանքի համար անհրաժեշտ էր քրիստոնյա ազգաբնակչության համակրանքը: Գեմ. Ջուբովը Ռիմսկի-Կորսակովին հրահանգում է. «...որովհետև քրիստոնյաների սառը վերաբերմունք ցույց տալն էլ կարող է նրանց սառեցնել մեզանից, և զրկել նրանց մեզ վրա դրած այն հույսից, թե մենք պետք է նրանց ազատենք լծից, ուստի թողնում են ձեր գերազանցության խոհեմության այնպիսի ընթացք տալ ձեր վարմունքին, որ մահմեդականները պատճառ չունենան վաղաժամանակ կասկածներ տանելու...: Այս երկու հակադրությունները հաշտեցնելու համար, հուսով են, քիչ չի նպաստի հայոց արքեպիսկոպոս Հովսեփի միջնորդությունը»<sup>1</sup>: Արղությանի առաքելությունը այն էր, որ հասկացներ քրիստոնյաներին, թե ռուսների դիրքորոշումը անհրաժեշտ քաղաքականություն էր:

Ա. Ռիմսկի-Կորսակովի բանակն իր առաջխաղացման ընթացքում մեծամեծ արգելքների հանդիպեց: Աշնանային վատ եղանակները փչացրել էին ճանապարհները, զորքի պաշարեղենը խիստ պակասել էր: Արղությանը ...շրջաբերական թղթեր էր ուղարկում շրջակայքի հայ ազգաբնակչությանը, համոզում օգնել ռուսներին, անձամբ շրջում էր հայ գյուղերով և զորքի համար սայլեր ու պաշար նախապատրաստում: Նուխու խանից, որի տարածքով առաջ էր շարժվում բանակը, Արղությանը թույլտվություն ստացավ, որ հայ գյուղացիներն իրենց սայլերով տեղափոխեն զորքի պարենը<sup>2</sup>: Ռիմսկի-Կորսակովն իր անսահման շնորհակալությունն է հայտնում արքեպիսկոպոսին. «Ես չեմ կարող բավական չափով շնորհակալություն չհայտնել Ձերը

<sup>1</sup> Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, էջ 399:

<sup>2</sup> Տե՛ս Լեո, Յովսեփ կաթողիկոս Արղութան, էջ 159:

Սրբազնությանը՝ Ձեր այնքան մեծ ջանքերի համար, որ պատրաստ եք կատարել հոգուտ իմ հրամանատարության տակ գտնվող զորքերի...»<sup>1</sup>:

Դերբենդից հետո Ղուբայի և Բաքվի խաներն առանց դիմադրության հնազանդություն հայտնեցին Ջուբովին: Ջուբովի քաղաքականությունն էր խաղաղ միջոցներով, զգուշորեն հնազանդեցնել տիրողներին: Այս գործունեությանը երբեմն իր կյանքը վտանգելով նպաստում էր Արղությանը, որը մեծ համարում ուներ ոչ միայն հայ բնակչության, այլև տեղի մահմեդական կառավարիչների շրջանում: Երբ ռուսական բանակը մոտեցավ Շամախուն, Յովսեփն անձամբ գնաց տեղի Մուստաֆա խանի մոտ, համոզեց չդիմադրել: Խանն իր հպատակությունը հայտնեց ռուսներին<sup>2</sup>: Նույն կերպ, Արղությանի միջնորդությամբ, Գանձակի Ջավադ խանն առանց դիմադրության հանձնվեց ռուսներին. «...ընդ որս էր և Յովսեփ արքեպիսկոպոս հայոց ռուսաստանեայց. և 'ի համբաւոյ աստի սարսեալ բռնաւոր այլազգի իշխողաց՝ միչև նորին իսկ շահ...»<sup>3</sup>: Գլխավոր հրամանատար Ջուբովը հատուկ շնորհակալություն է հայտնում Արղությանին:

Սակայն ռուսական հաղթարշավն Անդրկովկասում շուտով ընդհատվեց: 1796 թ. նոյեմբերի 6-ին վախճանվեց Եկատերինա կայսրուհին: Նոր գահ բարձրացած Պավել I կայսրը նկատի ունենալով երկրի ֆինանսական ծանր դրությունը, ինչպես նաև Անգլիայի դիրքորոշումը ռուսական արշավանքների նկատմամբ՝ հրամայեց ռուսական բանակին վերադառնալ: Անդրկովկասը դարձյալ մատնվեց ճակատագրի կամքին:

Պավելի գահակալությամբ Արղությանի դիրքերը ռուսական արքունիքում Յովհ. Լազարյանի շնորհիվ չխախտվեցին. նա արժանացավ նորանշանակ կայսեր բարեհաճությանը և նոր արքունիքում վերսկսեց իր միջնորդություններն ու խնդրանքները: Նրա ջանքերը զուր չանցան: Պավել կայսրը 1798 թ. փետրվարի 26-ին հրովարտակով իր բարեհաճությունն ու շնորհակալությունն էր հայտնում ամբողջ հայ ազգին<sup>4</sup>: Նոր խոստումներից խրախուսվելով՝ Մելիք-Ջունջուղն ու Մելիք-Ֆրեյդունը 1799 թ. Արղությանի միջնորդությամբ խնդրագիր ներկայացրին կայսրին, որը «...թելադրված էր հուսահատությունից և որի իսկական անունն է քաղաքական ինքնասպանություն»<sup>5</sup>: Խնդրում էին, որ թույլատրվի վերաբնակվել ռուսական որևէ տարածքում, օրինակ՝ Եկատերինոգրադի մոտ, կամ էլ հայկական Լոռիում: Պավելը կատարեց խնդրանքների երկրորդ կետը, և, ինչպես հայտնի է, երկու մելիքներն իրենց հպատակների հետ եկան Լոռի: 1799 թ. հունվարի նամակներից մեկում Արղությանը

<sup>1</sup> Տե՛ս Собрание актовъ , относящихся к обозрению истории армянского народа, ч. III., М., էջ 340.

<sup>2</sup> Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, էջ 397-398, Ռաֆֆի, Աշխ., էջ 514:

<sup>3</sup> Տե՛ս Գիւտ քահանա Աղանեանց, Դիւան հայոց պատմութեան, գիրք Ա-Բ, Թիֆլիս, 1893, էջ 30:

<sup>4</sup> Տե՛ս Собрание актовъ , относящихся к обозрению истории армянского народа, ч. I, М., էջ 194-196.

<sup>5</sup> Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, էջ 371:

գրում է, որ մելիքների ռուսական կողմնորոշմանը շատ է նպաստել<sup>1</sup>: Ինչպես իրավամբ նշում է Լեոն, այդ վայրը (Եկատերինոգրադ-Յ. Ա.) առաջարկել էր Արղությանը, քանի որ մելիքները երբևէ Ռուսաստանում չէին եղել<sup>2</sup>:

1798 թ. Յերակլ II-ի մահից հետո նրա հաջորդ Գեորգիի XII չկարողացավ շտկել երկրի ներքին անկայուն իրավիճակը և ստիպված էր դիմել ռուսների օգնությանը: 1799 թ. ռուսական ռազմարշավ նախատեսվեց դեպի Թիֆլիս: Արղությանի կապերը վրաց արքունիքի և ազնվականության հետ դարձյալ ի սպաս դրվեցին ռուսական արտաքին քաղաքական շահին. նա հստակ առաքելություն ուներ՝ ռուսների կողմը գրավել Թիֆլիսի հայ ազնվականությանը և գլխավորել Վրաստանի միավորման տոնակատարությունը: Փետրվարի 16-ին Սիոնի մայր եկեղեցում տեղի է ունենում Վրաստանի միավորման իրադարձությունը, որից հետո Արղությանը վրացերեն քաջալերանքի խոսք է ասում հավաքված բազմությանը, հորդորում՝ հավատարիմ մնալ ռուսական գահին<sup>3</sup>: Հաջորդ օրը կատարվում է գլխավոր հանդիսությունը. «...Եւ Յովսէփ նախագահեց այդ հանդիսութեան, գոհունակ զգացունով եւ արտակարգ ցոյցերով, վասնզի ինքն եղած էր բանակցութեանց միջնորդը, եւ ռուսական ձգտումներուն ալ օգնականը...»<sup>4</sup>:

Պետք է նշել, որ ռուս ռազմական գործիչները բարձր են գնահատել նրա գործունեությունը: 1784 թ. ապրիլի 26-ի Պ. Պոտյոմկինն իր զեկույցում գրում է. «Չեն կարող չվկայել արքեպիսկոպոս Յովսէփի ծայր բարձր ջանքերը, որոնք բազմիցս ապացուցված են հայկական գործերում»<sup>5</sup>: Պ. Ջուբովը, Վ. Ջուբովը և մյուս գեներալները բազմիցս նշել են նրա օգուտկար, մեծ ու եռանդուն աշխատանքը<sup>6</sup>: Ի վերջո, 1800 թ. ռուսական կառավարության աջակցությամբ Արղությանն ընտրվեց Ամենայն հայոց կաթողիկոս: Արղությանների տոհմը կայսրն ընդունեց ռուս իշխանական տոհմերի շարքում, իսկ 1801 թ. արքունիքի կողմից հայ արքեպիսկոպոսը պարգևատրվեց Ս. Աննայի առաջին կարգի շքանշանով:

Այսպիսով, Արղությանի Հայաստանի ազատագրության գաղափարները միանգամայն համահունչ էին ժամանակի հայ ազգային-ազատագրական գործիչների գաղափարներին՝ հայկական պետականության վերականգնում հայ-վրացական միացյալ թագավորության կամ հայկական առանձին պետականության տեսքով: Նա շարունակեց հայ եկեղեցական գործիչների մինչ այդ սկսած գործը, այն է՝ ամրապնդել

<sup>1</sup> Տե՛ս Армяно-русские отношения..., док. 347 с. 500.

<sup>2</sup> Տե՛ս Լեօ, Յովսէփ կաթողիկոս Արղութեան, էջ 169:

<sup>3</sup> Տե՛ս Ա. Երիցեան, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, հ. Ա., Թիֆլիս, 1894, էջ 13:

<sup>4</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 3777:

<sup>5</sup> Армяно-русские отношения..., док. 197, с. 302.

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, док. 275, с. 408, Собрание актовъ, относящихся к обозрению истории армянского народа, ч. III, М., էջ 334, 341.

հայ-ռուսական հարաբերությունները և այդ հզոր պետության օգնությամբ ազատագրել հայ ժողովրդին պարսկական ու թուրքական լծից: Նրա քաղաքական հայացքները միտված էին ոչ թե այլազգի պետության օգնությամբ թոթափել օտար լուծը, այլ ավելի շուտ ռուսական հզոր անուն վաստակած բանակի ներկայությամբ սաստել մահմեդական տիրողներին: Արդությանն ամեն ջանքերի դիմեց, որպեսզի իրականություն դառնա ռուսական արշավանքը դեպի Անդրկովկաս՝ ստեղծելով բոլոր նպաստավոր պայմանները՝ սկսած ռուսական զորքին նյութապես ապահովելու գործի կազմակերպումից մինչև տեղի կրոնական, ազգային գործիչներին ու ժողովրդին ռուսական կողմնորոշման հակելուն, դրանով իսկ հայ-ռուսական հարաբերություններին նոր թափ հաղորդելով:

**Асмик Амирджанян, Иосиф Аргутян и армяно-русские отношения (конец XVIII в.)** – В статье изложены деятельность видного государственного и религиозного деятеля Иосифа Аргутяна, его роль и вклад в армяно-русских политических отношениях.

**Hasmik Amirjanyan, Hovsep Arghutyan and the Armenian-Russian relations ( the end of the 19<sup>th</sup> century)**-The article presents the activities of prominent political and religious figure Hovsep Arghutyan, his important role and contribution to the Armenian-Russian political relations.

**Հասմիկ Ամիրջանյան-պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող:**